№ 178 Սեպտեմբերի 25 (Հոկտեմբերի 7) 1881 Սեպտեմբերի 25 (Հոկտեմբերի 7) № 178

ՏԱՍՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլի, կէս տարվանը 6 ռուբլի։
Առանձին համարները 5 կոպէկով։
Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ։
Օտարաքաղաքացիք դիմում են ուղղակի
Тифлисъ. Редакція «Мшакъ»

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(Բացի կիրակի եւ տօն օրերից)
Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով։
Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր բառին 2 կոպէկ։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ։ Նամակ Ախալցխայից։ Նամակ Ախալքալաքից։ Ներքին լուրեր։— ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ։ Տեղեկութիւններ Հայաստանից։ Անգլիա։ Գերմանիա։ Բօլգարիա։ Ֆրանսիա։ Նամակ Թիւրքիայից։ Արտաքին լուրեր։ — ՀԵՌԱԳԻՐՆԵՐ։ — ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ։

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ԱԽԱԼՑԽԱՅԻՑ

—

Սեպտեմբերի 15

Ախալցխայի հասարակութեանը յայտնի է, որ երբ 1876 թւականում, Յովհաննէս Վանցեանին երեցփոխան ընտրվելու հարց ծագեցաւ Վանցեանի բարեկամների կողմից, ժողովրդի մեծ մասը հակառակ էր այդ ընտրութեանը, Վանցեանի անձնական ապահովութիւն և կարողութիւն չունենալուն պատճառով։ Սրա համար պ. Յովհաննէս Վանցեանը, որ մեծ ցանկութիւն ունէր այդ պաշտօնը ստանալու, իր կողմից երաշխաւոր ներկայացրեց պ. Յակոբ Սաղաթէլեանցին, որը և յանձն առաւ մէկին տասը վճարել՝ եթէ Վանցեանը վատնէ եկեղեցական գումարները իր երեցփոխանութեան ժամանակ։ Իբրև եկեղեցու օրինաւոր տէրեր՝ այդ երաշխաւորութեան թուղթը գրել տուին իրանց անունով նոյն թուականի հաշուատեսները՝ պ. պ. Սարգիս Ցարոյեանցը և Յովակիմ Գեղամեանցը, այնպէս որ՝ պ. Յակոբ Սաղաթէլեանը պատասխանատու էր դրանց առաջ և ոչ հասարակութեան։ Բայց շատ ափսոս, որ այդ թուղթը չը գտնվեցաւ ոչ հոգևոր կառավարութեան և ոչ երեցփոխան Վանցեանի գործերում։ Ինչպէս երևում է, վերոյիշեալ պատուելի հաշուատեսները, երբ հրաժարական են տուել, այդ թուղթն էլ են հրաժարեցրել, որ դրանով պ. Յակոբ Սաղաթէլեանցին էլ, իրանց հետ «ապագայ պատասխանատուութիւնից» ազատ պահեն….։ Գուցէ իրանք վաղուց գիտէին որ Վանցեանի երեցփոխանական գործունէութիւնը այսպիսի խայտառակութեամբ պիտի վերջանար, որ այդպէս փախել են պատասխանատուութիւնից։ Մեծարգոյ Կարապետ աղա Մութաֆեանցը հաշուատեսաց ժողովի մէջ յայտնեց՝ որ այդ թուղթը այժմ գտնվում է Յովհաննէս աղա Յակոբջանեանցի մօտ, ինքը տեսել է, կարդացել է և յոյս ունի որ կարելի է այդ թուղթը ձեռք բերել։ Մենք ևս, մեծայոյս ենք, որ Յովհաննէս աղա Յակոբջանեանցը, իբրև նախանձախնդիր եկեղեցական շահերին, կը ներկայացնէ այդ թուղթը հաշուատեսներին, իրան ինչ օգուտ եթէ երկար պահէ կամ ոչնչացնէ։

Հարկաւոր եմ համարում յայտնել որ «Մշակի» 138 և 140 համարներում Ախալցխայի նամակների հեղինակը ես չեմ, իզուր է ինձ վրա կարծիք տանել։

Խմբագիր տէր, խնդրում եմ հիւրընկալէք իմ այս նամակը ձեր պատուական լրագրում։

Վահան Գրիգորեանց

ՆԱՄԱԿ ԱԽԱԼՔԱԼԱՔԻՑ

—

Սեպտեմբերի 19

Սրանից երկու տարի առաջ մտադրութիւն կար տեղւոյս հայոց գերեզմանատունը, որի չուրջը հետզհետէ շինվում են քաղաքիս տները, պարսպապատել, որպէս զի անմաքրութիւններից ազատ մնայ։ Այդ մասին բաւական աշխատեցաւ Ստեփաննոս քահ. Դէմիրճօղլեանց, բայց ափսոս որ նրա ձայնը մնաց «ձայն բարբառոյ յանապատի»։

Մեր գերեզմանատունը այժմ մի քստմնելի պատկեր է ներկայացնում. իւրաքանչիւր քայլի վրա մարդկանց և անասնոց կղկղանքներ են ցրված, որովհետև հէնց այս տարի էլ այդ գերեզմանատնից մի քանի սաժէն հեռու էր գըտընվում դրագունների երկու գնդի բանակը, որի զինուորներից ոմանք աղբանոց էին շինել այդտեղ։ Գերեզմանատան կից դրագունները կապում էին գնդի ձիերը։ Անձրևի ջրերը լուանալով այդ անմաքրութիւնները կուտակել են նրանց գերեզմանների մէջ։

Պահանջել որ, ինչպէս Եւրոպայում սովորութիւն կայ, գեղեցիկ պարտէզներով, ճեմելիքներով զարդարեն մեր գերեզմանները, ի հարկէ չենք կարող առ այժմ, բայց միթէ մենք կարող ենք մեր սրտի սիրելիները՝ մեր հայրերը, մայրերը, եղբայրները և քոյրերը թողնել այդպիսի ապականված տեղում։

Չեմ կարծում որ այդ բանի համար փող չը հաւաքվի, եթէ ինիցիատօրներ լինեն։

Այսօր այստեղ վախճանվեցաւ քաղաքիս հարուստներից մինը, Խաչատուր աղա Գրիգորեանցը, արդէն ծեր հասակում։ Հանգուցեալը կտակել է տեղւոյս երկսեռ ուսումնարաններին հինգ հարիւր ռուբլի։ Նրա վերջին կամքի համաձայն այդ փողերով պէտք է առնվէին արքունական տոկոսաբեր թղթեր և յանձնվէին ուսումնարանների հոգաբարձութեանը, որոնց մօտ դրանք մնալու են տաս տարի, իսկ տասը տարուց յետոյ տոկոսի հետ գոյացած գումարով, տեղիս երկսեռ հոգևոր դպրոցներում պահվելու են հանգուցեալի անունով աղքատ և որբ մանուկներ։ Բացի դրանից հանգուցեալը կտակել է յօգուտ տեղւոյս աղքատաց յիսուն ռուբլի։

Մեր քաղաքի սրիկաները սկսել են այժմ մի նոր տեսակ գողութիւն. Նրանք տների պատուհանները բաց են անում և տան մէջ եղած իրեղէնները տանում են։

***

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

Ստացանք պ. Ալէքսանդր Մէլիք-Փաշայեանցից 4 ռուբլի յօգուտ «Ժուրնալ դ'Օրիան» լրագրի։ Առաջվայ փողերի հետ կանի 1112 ռուբլի 50 կոպէկ։

—

Ստացանք մեծ շնորհակալութեամբ բժիշկ Սօլոմոն Ամիրովից նրա հեղինակութիւնը ռուսերէն լեզուով «Замѣтки объ ощущеніяхъ и страстяхъ» վերնագրով։ Դա մի ժողովրդական գրուածք է այն ազդեցութեան մասին, որ ունեն սեռական կրքերը մարդու առողջութեան վրա։ Գիրքը տպված է Թիֆլիսում Մ. Վարդանեանցի և ընկ. տպարանում, ներկայ 1881 թւին։ Տիպը շատ մաքուր և գեղեցիկ է։ Գինը մի ռուբլի է և ծախվում է յօգուտ այն դրամագլխի որ կազմվում է Կովկասեան Բժշկական ընկերութեան մէջ թէ ռուսաց և թէ տեղական լեզուներով ժողովրդական գրքեր հրատարակելու համար։ Նոյն նպատակով կարդաց Կրուժօկում, մի քանի ամիս առաջ պ. Բաքայեանը իր դասախօսութիւնը։ Պ. Ամիրովի գիրքը շատ թեթև և դուրեկան ոճով է գրված և մեծ հետաքրքրութեամբ է կարդացվում։ Խորհուրդ ենք տալիս մեր հասարակութեանը կարդալ այդ գիրքը և վատ չէր լինի եթէ նա թարգմանվէր և հայերէն լեզուով։

—

Սեպտեմբերի 21-ին Թիֆլիսի բժիշկները մի ճաշ տուեցին գերմանացի հռչակաւոր պրօֆէսօր Վիրխովին։ Ճաշը տրվեցաւ Թիֆլիսի Ժողովարանի այգիում։ Երբ Վիրխով երևաց, բժիշկները նրան ձեռքերի վրա տարան մինչև ճաշելու տեղը։ Ճաշի ժամանակ, շատ ճառեր խօսվեցան ի պատիւ այն մարդու որ իր գիտնական հետազօտութիւններով ահագին յեղափոխութիւն է գործել բժշկական ժամանակակից վարդապետութեան մէջ։ Ճառերից մէկը կարդաց և բժիշկ Անդրէաս Դանիէլբէգեանց, որի մէջ նկարագրեց Վիրխովի գործունէութիւնը և ցոյց տուեց նրա նշանակութիւնը գիտութեան մէջ։ Իր ճառի վերջում պ. Դանիէլբէգեան այն միտքը յայտնեց, որ բաւական է Վիրխովի Կովկաս գալը, որպէս զի ամբողջ լուսաւորված Եւրոպան սկսի իր հայեացքը ուղղել Կովկասի վրա։ Վիրխովի և ուրիշ գիտնականների մեզ մօտ գալը, ատենաբանի կարծիքով, մի գրաւական է մեզ համար որ հեռու չէ այն բաղդաւոր ժամանակը, երբ կը հիմնվի մի համալսարան Թիֆլիսում։

—

Մենք մեզ թոյլ կը տանք մի նկատողութիւն անել գիտնականներին տուած ճաշերի կարգադրիչներին։ Սեպտեմբերի 21-ին Վիրխովին ճաշ տրվեցաւ բժիշկների կողմից, իսկ հետևեալ օրը, 22-ին, հայազգի Էմինի աշակերտները իրանց յարգելի ուսուցչին մի ճաշկերոյթ տուեցին։ Բայց ինչպէս բժիշկները, այնպէս էլ Էմինի աշակերտները անընդունակ եղան առաջուց լաւ կարգադրել այդ հանդիսաւոր խնջոյքները։ Բժշկներից միայն 60 մարդ էին ներկայ ի պատիւ Վիրխովի տուած ճաշին, նոյնպէս Էմինի աշակերտներից շատերը զրկվեցան բաղդից իրանց ուսուցչին իրանց համակրութիւնը յայտնելու։ Պատճառն այն էր, որ կարգադրիչները ոչ մի տեղ, ոչ մի լրագրում մի երկու օր առաջ չը յայտարարեցին այդ ճաշի մասին և չը յայտնեցին թէ ցանկացողները ում պիտի դիմեն։ Փառք Աստուծու, այժմ այն ժամանակները չեն, երբ Թիֆլիսում կային միայն երկու շաբաթաթերթեր. այժմ կան Թիֆլիսում երկու ռուս և երկու հայ ամենօրեայ լրագիրներ և մի վրաց ամենօրեայ թերթ։ Այժմ ամեն օր կարելի է յայտարարել։

—

«Journal d'Oriant» լրագրի 39 համարից սկըսած տպվում է ֆրանսերէն լեզուով Գրիգոր Արծրունու դասախօսութիւնը «Թիւրքաց հայերի տնտեսական դրութեան վրա»։ Ֆրանսիական լրագիրը խոստանում է, դասախօսութեան տըպագրութիւնից վերջ, իր դիտողութիւններն անել այդ գրուածքի մասին։

—

Ռուս լրագիրներում կարդում ենք, որ հոկտեմբեր ամսի սկզբներում կոմս Լօրիս-Մէլիքօվ սպասվում է Ս. Պետերբուրգում։

—

«Тифл. Объявл.» լրագրում կարդում ենք որ Նիժնի-Նօվգորոդի տօնավաճառը այս տարի շատ աջող կերպով անցաւ և վերջացաւ։ Շատ քիչ և աննշան գումարի վէկսէլներ գանգատի ներկայացվեցան։ Տօնավաճառի շրջական գումարը հասաւ մինչև 220 միլիօն ռուբլի։ Մեր վաճառականները նշանաւոր գումարի այլ և այլ ապրանքներ գնեցին։

—

Լրագիրները հաղորդում են որ մեծ պասին թատրօնական ներկայացումներ Մօսկվայում և Ս. Պետերբուրգում արգելված կը լինեն։

—

Մեր քաղաքը նոր եկած ֆրանսիացի երգիչների և դերասանների խումբը վաղվանից սկըսում է իր ներկայացումները տալ Արծրունու թատրօնում։

—

Շնորհակալութեամբ ստացանք Մօսկվայից, պ. Թէլէթեանից նրա յօրինած «Первоначальная практическая и систематическая народная школа для ручной Гармоники.» Составилъ И. Телетовъ. Տետրակի գինը 1 ռուբլի է։ Այդ մի դասագիրք է սկզբնական և ժողովրդական ուսման գարմոնիկա ասված երաժշտական գործիքի վրա ածելու համար։

—

Թիֆլիսի հնագիտական ժողովը վերջացաւ, մեր գիտնական հիւրերը փոքր առ փոքր թողնում են մեր քաղաքը և Թիֆլիսը կրկին ընդունել է իր առաջվայ, սովորական տեսքը։ Մեր բոլոր հիւրերից ամենաոգևորված կերպով ընդունվել է մեր ամեն շրջաններում պրօֆէսօր Ռուդոլֆ Վիրխով։ Այդ տեսակ ընդունելութիւնը ապացոյց է որ պրօֆէսօրը մեծ ժողովրդականութիւն ունի ոչ թէ միայն Եւրոպայում, բայց և հեռու Ասիայում։ Եւ ճշմարիտ. հարկաւոր է քիչ թէ շատ գրագէտ մարդ լինել, Վիրխովի անունը լսած լինելու համար։ Մեր հասակի մարդիկ դեռ գիմնազիայում աշակերտ լինելու ժամանակ, արդէն գիտէինք նրա անունը։ Հարկաւոր չէ բժիշկ լինել լսած լինելու համար որ Վիրխով իր աշխատութիւններով մի յեղափոխութիւն է գործել բժշկական գիտութեան մէջ, հարկաւոր չէ քաղաքական մարդ լինել, լսած լինելու համար, որ Վիրխով Պրուսիայի ազատամիտ և առաջադէմ կուսակցութեան պարագլուխներից մէկն է և նրա պաշտպանութեանը պարտական է ազատամիտ բազմաթիւ օրէնքների իրագործումը Գերմանիայում, հարկաւոր չէ ոչ թէ միայն մի գիտնական, բայց և առհասարակ մի կրթված մարդ լինել, իմանալու համար որ Վիրխով պատկանում է ամենաբազմատեսակ գիտնական հմտութիւններ ունեցող հազւագիւտ ուսումնականների շարքին։ Դեռ մանկութիւնից մենք սովոր էինք միացնել մեր գաղափարի մէջ գերմանական գիտութեան ամենանշանաւոր երեք անունները. Հումբօլդ, Վիրխով և Հելմհօլց։ Թող երևելի գիտնականի մեր երկրի մէջ գալը մի բարի նշան լինի մեզ համար, թող նրա միջոցով քաղաքակիրթ աշխարհը և մեր երկրի վրա աւելի և աւելի ուշադրութիւն դարձնի։ Ցանկանանք որ մօտիկ ապագայում և մեր հեռաւոր երկիրը, Անդրկովկասը, դառնայ, եթէ այդպէս կարելի է ասել, մեծ, համամարդկային, գիտնական, կամ առհասարակ մտաւոր լաբօրատօրիումի մի մաս։ Մենք միացնում ենք մեր ցանկութիւնը վերջին օրերումս մեզ մօտ յայտնված բոլոր միւս ցանկութիւնների հետ՝ մօտիկ ապագայում իրագործված տեսնել Թիֆլիսի մէջ մի համալսարան։

—

Շնորհակալութեամբ ստացանք պ. Յովհաննէս Բիւրքճեանից նրա ֆօտօգրաֆիական տպման ժողովածու Անիի աւերակների։ Ժողովածուն արժէ 20 ռուբլի և բաղկացած է 40 ստէրէօսկօպիական պատկերներից։ Անիի հռչակաւոր աւերակները պէտք չունեն մեր պաշտպանութեան, բայց պ. Բիւրքճեանի ֆօտօգրաֆիական աշխատութիւնների մասին կասենք, որ շատ քիչ է պատահում տեսնել այդ տեսակ մաքուր և անսխալ ֆօտօգրաֆիաներ։ Եւ այդ մեր կարծիքը չէ միայն։ Մենք առիթ ունեցանք ներկայ գտնվել երբ պ. Բիւրքճեան ներկայացրեց իր ժողովածուն պրօֆէսօր Վիրխովին։ Գիտնականը հիացած էր հայոց հոյակապ, փառաւոր և շնորհալի ճարտարապետութիւնից և աւելացրեց նոյն իսկ վերոյիշեալ խօսքերը. «Ինձ շատ հազիւ է պատահել տեսնել այդ տեսակ մաքուր և անսխալ ֆօտօգրաֆիա»։ Արդեօք հայոց հասարակութիւնը ցոյց կը տայ իր համակրութիւնը Անիի աւերակների նկարչին, առնելով նրա ժողովածուն, որի ստեղծելու վրա պ. Բիւրքճեան ահագին անձնական ջանք, աշխատութիւն և դրամական միջոցներ է գործ դրել։

—

Վրաց հասարակութիւնը վրդովվել է այն ճառից, որ արտասանել է պրօֆէսօր Խվօլսօն քաղաքի կողմից հնագիտական ժողովին տուած ճաշի ժամանակ։ Վրացիները ասում էին՝ թէ դա անտակտութիւն էր Վրաստանի մայրաքաղաքում խօսել միմիայն հայերի վրա։ Պրօֆէսօրը այդ գանգատները լսելով, տպել է մի նամակ «Кавказъ» լրագրում, որի մէջ բացատրում էր թէ նոյն տեսակ ճառ նա ասեց Քութայիսում վրացիների վերաբերութեամբ, իսկ այստեղ Թիֆլիսում, տեսնելով իր չորս կողմ հայերին, նա ուղղել է իր խօսքը դէպի հայերը։

—